

26.053

1914

334.5

9-28

05 JAN 2010

0465

1914 №2 1022



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՂԱԶԱՆԻ ԳԵՒԵՐԻ (ԳՆՆՁՆԻ ԵՆՀՆԳ)

ԶԱՐԽԷՉ ԳԻՒՂԻ

# ՀԱՒԱՏԱՐԻՄ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ



## Уставъ О-ва Потребителей АВАТАРИМЪ

въ с. Чархечъ, Казахскаго уѣзда, Елисавет. г.

2001

Թ Ի Փ Ղ Ի Ս

Տպարան «Հերմէս», Գրաֆսկայա փող. № 6  
1914

33415  
9-28



25 DEC 2008  
И. И. СЕНТОВ  
ВОСТАНОВЛЕНИЕ  
Аналогичный документ  
СССР


ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՂԵԶՁԵԻ ԳՇԻՇՈՒԻ (ԳԵՆԶԵՐԻ ՆԵՀԵՆԳԻ)

ԶԱՐԽԷԶ ԳԻԻՂԻ

≡ ՅԱԻԱՏԱՐԻՄ ≡

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ



Уставъ О-ва Потребителей

**АВАТАРИМЪ**

въ с. Чархечъ, Казахскаго уѣзда, Елисавет. г.

Թ Ի Փ Ղ Ի Ս

Տպարան «Հերմէս», Իրաֆուկայա փող. № 6

1914

116 JUL 2013

26.053

СЕРИЯ  
№ 116  
1913

СЕРИЯ  
№ 116

СЕРИЯ  
№ 116

СЕРИЯ  
№ 116

СЕРИЯ  
№ 116

50552-ահ



(36263-66)

4266-2008

УТВЕРЖДАЮ

30-го Сентября, 1913 г. г. Елисаветполь. И. д. Елизаветпольскаго Губернатора-Ковалевъ.

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ր Ն

Ղազարի գաւառի (Գանձակի նահանգ) Չարխէշ գիւղի

«ՀԱՒԱՏԱՐԻՄ»

Սպառողական ընկերութեան

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1 § Չարխէշ գիւղի «ՀԱՒԱՏԱՐԻՄ» Սպառողական Ընկերութիւնը հիմնուում է, որ մատակարարի իր անդամներին ըստ կարելոյն աժան գրնով, կամ չափաւոր, շուկայի գներով սպառման նաև տնային գործածութեան համար անհրաժեշտ զանազան առարկաներ: Բացի դրանից նա հնարաւորութիւն է տալու իր անդամներին ընկերութեան գործողութիւններից ստացւած օգուտից խնայողութիւն անել \*):

\*) Ծանօթ. Պատշաճաւոր թոյլտուութեամբ և գոյութիւն ունեցող կանոնները պահպանելով կարելի է ընկերութեանը կից բաց անել այնպիսի հիմնարկու-

§ 2 Առաջին § ում յիշուած նպատակի համեմատ ընկերութիւնը կարող է՝ ա) քրէհել կամ հիմնել սեփական պահեստներ և խանութներ սպառելու և տնային գործածութեան առարկաներ պահելու կամ վաճառելու համար.

բ) Պայմանաւորել կողմնակի մարդկանց կամ հիմնարկութիւնների հետ, զանազան առարկաներ կամ ընկերութեան շրջանառութեան համար անհրաժեշտ դրամական միջոցներ ձեռք բերելու վերաբերմամբ:

գ) Ընդհանուր հիմունքներով ձեռք բերել ընկերութեան նպատակների համար անհրաժեշտ անշարժ կայքեր:

դ) Պատշաճաւոր թոյլտուութեամբ մասնակցել ընկերութեան նպատակներին համապատասխանող ձեռնարկութիւնների մէջ:

§ 3 Ընկերութեան անդամներին ապրանքներ վաճառելը տեղի է ունենում կանխիկ դրամով կամ վարկով (կրեդիտով), որի չափն ու ձևը պէտք է որոշէ ընդհանուր ժողովը\*):

§ 4 Ընկերութիւնը, նրա հիմնարկութիւնները, գրասենեակները և գործակալները գիլդիական տուրքի, վաճառականական հարկի և մաքսափին, դրոշմային ու այլ տուրքերի վերաբերմամբ ենթարկւում են բոլոր այն կարգերին և օրէնք-

թիւններ, որոնք նպատակ ունեն զանազան միջոցներով և ձևերով բարւոքել ընկերութեան անդամների նիւթական և բարոյական վիճակը:

\*) Ծանօթ: Վերոյիշեալ §-ում յիշատակուած ապրանքները կարելի է ծախել և կողմնակի մարդկանց, բայց միայն կանխիկ փողով ընդհանուր ժողովի որոշած պայմաններով:

ներին, որոնք այժմ գոյութիւն ունեն կայսրութեան մէջ և որոնք ապագայում կը հրատարակւեն նոյն առարկայի նկատմամբ:

§ 5 Ընկերութիւնն ունի իր անւանական կնիքը:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 6 Ընկերութեան միջոցները կազմում են շրջանառութեան և պահեստի կապիտալները:

§ 7 Շրջանառութեան կապիտալը կազմւում է՝

- ա) մուտքի վճարից (§ 13)
- բ) անդամակցական պայերից (§ 13) և
- գ) փոխառութիւններից, որ կանէ ընկերութեան վարչութիւնը ընդհանուր ժողովի որոշմամբ\*):

§ 8 Շրջանառութեան գումարը ծառայում է ընկերութեան առևտրական գործողութիւնների և ընթացիկ հաշիւների համար:

§ 9 Պահեստի կապիտալը կազմւում է

- ա) իւրաքանչիւր տարի ընկերութեան օգուտից որոշ բաժին հանելուց:
- բ) ընկերութեան կանոնադրութիւնն ու այլ գրքոյկներ վաճառելուց (§ 15)

\*) Ծանօթ. Ընկերութեան պարտքերի ընդհանուր գումարը մուտքի վճարների և պայերի կապիտալի գումարից աւել չը պէտք է լինի:

դ) օգուտ բաժանելիս առաջ եկած կուպէկները կոտորակներից (տես § 55-ի 4-րորդ ծանօթութիւնը)

դ) պատահական մուտքից.

§ 10 Պահեստի գումարը նշանակուում է բացառապէս այն վնասները ծածկելու համար, որոնք կարող են առաջ գալ ընկերութեան գործողութիւններից չընտրատեսնուած պատճառներով:

§ 11 Պահեստի գումարը կարելի է ընդհանուր ժողովի որոշմամբ դարձնել պետական կամ պետութեան կողմից ապահովեցրած տոկոսային թղթեր և պահել խնայողական դրամատներում, պետական բանկում, նրա բաժանմունքներում կամ, պատշաճաւոր թոյլտուութեամբ, պետական գանձարաններում:

Պահեստի գումարը կարելի է ծախսել իր նպատակի համեմատ (§ 10), միայն ընդհանուր ժողովի որոշմամբ:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 12 Ընկերութեան անդամ կարող է լինել Չարխէջ գիւղի և նրա մերձաւոր շրջակայքում եղող գիւղերից ամեն մի անձ, նմանապէս ամեն տեսակի ընկերակցութիւններ, արտելներ, հիւանդանոցներ, դպրոցներ և այլ հաստատութիւններ,

ներ, որոնք ցանկութիւն կը յայտնեն ենթարկւել այս կանոնադրութեանը \*):

§ 13 Ընկերութեան անդամ գրւողը վճարում է՝

- ա) Մուտքի վճար մի ըուբլի՝
- բ) Պայի արժէքը 10 ըուբլի՝ \*\*):

§ 14 Ընդհանուր ժողովը է որոշում, թէ իւրաքանչիւր անդամ քանի պայ կարող է ունենալ:

§ 15 Իւրաքանչիւր անդամին վարչութիւնը տալիս է, ընդհանուր ժողովի որոշած վճարը վերցնելով, մի օրինակ այս կանոնադրից և մի օրինակ էլ հաշւեգրքոյի: Հաշւեգրքոյի մէջ գրւում են անդամի վճարած գումարները, վերցրած ապրանքի արժէքը, նրա պայերի համար հասանելիք դիվիդենտը (օգուտը), վերցրած ապրանքի համար հասանելիք պրեմիան և ընկերու-

\*) Ծանօթ. 1) անդամների թիւը սահմանափակւած չէ:

Ծանօթ. 2) ընկերութեան անդամ չեն կարող լինել:

- ա) Դպրոցների աշակերտները.
- բ) Իսկական ծառայութեան մէջ գտնուող զինուորներ և գ) այն մարդիկ, որոնք դատաստանով զրկւած են իրաւունքներից:

\*\*) Ծանօթ. պայը կարելի է վճարել միանւագ կամ մաս մաս՝ ընդհանուր ժողովի նշանակած ժամանակամիջոցներում:

թեան կասսայից նրա ստացած բոլոր գումարները \*):

§ 16 Իւրաքանչիւր անդամ ընդհանուր ժողովներում ունի միայն մի ձայն՝ անկախ նրա պայերի թւից: Այդ իրաւունքը չի կարելի յանձնել ուրիշին \*\*):

§ 17 Իւրաքանչիւր անդամ կարող է իր պայերը տալ, Վարչութեան գիտութեամբ, թէ ընկերութեան միւս անդամներին և թէ կողմնակի այն մարդկանց, որոնք անդամ լինելու իրաւունքից զրկւած չեն: Պայը կողմնակի մարդու յանձնելու դէպքում վերջինս պէտք է մուտքի վճար տայ \*\*):

\*) Ծանօթ. Ընկերութիւնը պահում է առանձին գրքեր՝ անդամների անհատական հաշիւներով, որպէսզի դրանց միջոցով որոշւի, թէ տարւայ ընթացքում իւրաքանչիւր անդամը որքան ապրանք է վերցրել:

\*\*\*) Ծանօթ. 1. Ընկերութեան անչափահաս անդամները ընդհանուր ժողովներում ձայն չունեն և չեն կարող ընտրել ընկերութեան գործերը կառավարելու որևէ պաշտօնի համար:

Ծանօթ. 2. Եթէ որևէ անդամ անմիջապէս շահախնդրւած է ընկերութեանը վերաբերեալ այս կամ այն հարցում օրինակ՝ ապրանք ծախելում, ընակարան քրեհելում կամ այլ վաճառականական ձեռնարկների մէջ, այդ դէպքում նա չպէտք է մասնակցէ այդ հարցերի որոշման ժամանակ:

\*\*) Ծանօթ. Մուտքի վճարը անդամներին չի վերադարձնուում ոչ կամովին դուրս գալու և ոչ էլ ընկերութիւնից արտաքսուելու դէպքում:

§ 18. Եթէ Ընկերութիւնը վնաս ունենայ, իւրաքանչիւր անդամ պատասխանատու է իր ունեցած պայերի գումարով: Իրանից դուրս նա ոչ անձնական պատասխանատութիւն է կրում և ոչ էլ պարտաւոր է որևէ լրացուցիչ վճարի ենթարկուելու ընկերութեան գործերի պատճառով:

§ 19 Այն անդամը, որը անճշտապահ կը լինի ընկերութեանը հասանելիք գումարները վճարելու վերաբերմամբ, (3 և 13) կարող է վարչութեան առաջարկութեամբ և ընդհանուր ժողովի որոշմամբ, ընկերութիւնից արտաքսուել:

§ 20 Արտաքսման պատճառ կարող է լինել բացի այդպիսի անճշտապահութիւնից. նաև կանոնադրութեան յամառօրէն խախտումը և ընկերութեան շահերին վնաս հասցնելը:

§ 21 Անդամի արտաքսումը կարող է տեղի ունենալ միայն ընդհանուր ժողովին ներկայ եղող անդամների թւի <sup>2</sup>/<sub>3</sub>-ի որոշմամբ: Արտաքսւողը իրաւունք ունի ժողովում իւր արգարացուցիչ բացատրութիւնները տալու:

§ 22 Թէ արտաքսւած, թէ ինքնակամ դուրս եկած և թէ մի քանի պայեր ունեցող անդամների յայտարարութեան համաձայն, Վարչութիւնը կը վերադարձնի նրանց պայերը, համապատասխան դեփզեհնտը և վերցրած ապրանքի համար հասանելիք պրեմիան միայն այն ժամանակ, երբ նրանք վերջացրած կը լինեն իրենց բոլոր հաշիւ-

ները ընկերութեան հետ: Այդ դէպքում պէտք է վճարելիք գումարից դուրս գալ նրանց բաժին ընկած փաստը, եթէ այդպիսին կայ:

§ 23 Թէ ինքնակամ հեռացած և թէ անճշտապահութեան համար արտաքսւած անդամները նորից ընկերութեան մէջ ընդունուել կարող են միայն § 13-ի համաձայն, վճարելով պարտադիր պայի արժէքը և մուտքի վճարը: Իսկ ուրիշ պատճառներով ընկերութիւնից արտաքսւածները ոչ մի դէպքում նորից չեն ընդունուում\*):

§ 24 Անդամի մահուան դէպքում նրա բոլոր պայերը համապատասխան դիվիդենտի և պրեմիայի հետ միասին տրուում են նրա ժառանգներին այն հիմունքներով, ինչպէս ինքնակամ դուրս եկող անդամներին (§ 22):

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՍՈՍՎԱՐԵԼԸ

§ 25 Ընկերութեան գործերը կառավարում են ա) ընդհանուր ժողովը և բ) վարչութիւնը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

§ 26 Ընդհանուր ժողովը իրաւունք ունի անհրաժեշտութեան դէպքում ընտրել բացի վար-

\*) Ծանօթ. Անճշտապահութեան համար արտաքսւած անդամները բացի վերոյիշեալից պէտք է վճարեն իրենց պարտքերն ընկերութեանը:

չութիւնից նաև վերաստուգիչ Մասնաժողով, որի գործունէութեան կարգը պէտք է որոշուի նոյն ընդհանուր ժողովի մշակած հրահանգով:

§ 27 Ընդհանուր ժողովները լինում են՝ սովորական և արտակարգ: Սովորական ընդհանուր ժողովները հրաւիրում են իւրաքանչիւր տարի, ապրիլ ամսից ոչ ուշ, անցած տարւայ հաշիւն ու բալանսը քննելու և հաստատելու, նոր տարւան նախահաշիւն ու գործունէութեան նախագիծը մշակելու, ինչպէս նաև վարչութեան անդամներ (§ 36) և վերաստուգիչ Մասնաժողով— (§ 53) ընտրելու համար: Ընդհանուր ժողովներում նոյնպէս քննուում և վճուում են այն բոլոր հարցերը, որոնք վարչութեան իրաւասութիւնից բարձր են կամ որոնք վարչութեան կողմից կառաջարկեն ընդհանուր ժողովին\*):

§ 28 Արտակարգ ընդհանուր ժողովներ հրաւիրում է վարչութիւնը իր հայեցողութեամբ կամ վերաստուգիչ Յանձնաժողովի կամ ընկերութեան անդամների  $\frac{1}{3}$ -րորդ մասի պահանջով: Վերաստուգիչ յանձնաժողովի կամ ընկերութեան անդամների այդպիսի պահանջը՝ ընդհանուր ժողով հրաւիրելու վերաբերմամբ, վարչութիւնը ի

\*) Ծանօթ. Ընկերութեան անդամներից ոչ ոք իրաւունք չունի առանց յարգելի պատճառների հրաժարելու ընդհանուր ժողովի կողմից իր վրա դրւած պարտականութիւններից:

կատար է անում ոչ ուշ քան երկու շաբաթեայ ընթացքում այդ պահանջը յայտարարելու օրից հաշուած:

§ 29 Ընդհանուր ժողովը վճռում է, այս կանոնադրութեան համաձայն, բոլոր այն հարցերը, որոնք վերաբերում են ընկերութեան գործերին. բայց անպատճառ նրա ղեկավարութեան են պատկանում ընկերութեան գործունէութեան առարկանները որոշելը, ընկերութեան համար անշարժ կալածքներ ձեռք բերելը, նրանց գրաւ դնելը, ծախելը կամ կապալով տալը, ինչպէս նաև ընկերութեան ձեռնարկները լայնացնելը: Ընդհանուր ժողովը որոշում է, թէ ձեռնարկները լայնացնելու, անշարժ կայքեր ձեռք բերելու դէպքում ինչպէս պէտք է հանգցնել այդ առթիւ կայացած ծախքերը: Ընդհանուր ժողովի զբաղմունքի առարկաներն են կազմում նոյնպէս այն բոլոր հարցերը, որ կառաջարկեն՝ վարչութիւնը, վերաստուգիչ յանձնաժողովը, ընկերութեան առանձին անդամները, նահանգապետը և ներքին գործերի մինիստրը:

§ 30 Իւրաքանչիւր ընդհանուր ժողովի տեղի, ժամանակի և զբաղմունքի առարկաների մասին վարչութիւնը յայտարարում է անդամներին նախապէս. նոյնը նա տեղեկացնում է տեղական ոստիկանութեանը և յայտարարութիւն է կա-

խում ընկերութեան հիմնարկութիւնների մէջ\*):

§ 31 Ընդհանուր ժողովը կը կայանայ միայն այն դէպքում, երբ ներկայ են վարչութեան տեղումը գտնւած անդամների կէսից ոչ պակաս: Իսկ անդամներ արտաքսելու, ձեռնարկը լայնացնելու, շրջանառութեան կապիտալը մեծացնելու կամ փոքրացնելու, կանոնադրութիւնը փոփոխելու կամ լրացնելու և գործերը վերջացնելու դէպքում պահանջուում է բոլոր անդամների  $\frac{1}{5}$ -ի ներկայութիւնը: Ընդհանուր ժողովներում հարցերը վճռուում են ներկայ եղողների ձայների մեծամասնութեամբ, բացի այս §-ում յիշած վերևի հարցերից, որոնք վճռուում են ներկայ եղողների  $\frac{2}{5}$  ձայների մեծամասնութեամբ: Ձայների հաւասարութեան դէպքում, երբ հարցը վճռուում է հասարակ մեծամասնութեամբ, ընդունուում է այն կարծիքը, որին կողմնակից է նախագահը\*\*):

\*) Ծանօթ. Ընդհանուր ժողովների քննութեանը ենթարկւել կարող են միայն այն հարցերը, որոնք նըշանակած են ժողովի հրաբերի մէջ, որոնք անմիջական կապ ունեն ընկերութեան կանոնադրութեամբ որոշւած գործունէութեան հետ և որոնց մասին տեղեկացրած է ոստիկանութեանը:

\*\*) Ծանօթ. 1. Ընդհանուր ժողովում բոլոր ընտրութիւնները ( §§ 36 և 53) ինչպէս նաև որևէ անդամին արտաքսելը (§ 21) կատարուում է գաղտնի քէտարկութեամբ: Բոլոր միւս դէպքերում քէտարկութեան ձևը որոշում է ինքը ընդհանուր ժողովը:

§ 32 Եթէ անդամները օրինական թւի բացակայութեան պատճառով առաջին ժողովը չկայանայ, այդ դէպքում ոչ շուտ, քան մի շաբաթից յետոյ հրաւիրուում է երկրորդ ժողով, որը օրինաւոր կը համարւի և որոշումները վերջնական, անկախ ներկայ եղող անդամների թւից: Բայց վարչութիւնը պարտաւոր է այդ մասին յիշեցնել անդամներին ժողովի հրաւերի մէջ: Այդպիսի երկրորդ ժողովում կարող են քննել միայն այն գործերը, որոնք նշանակւած չեն առաջին ժողովի քննութեան համար: Այս դէպքում վերևի §-ում յիշատակւած հարցերը վճռուում են ներկայ եղողների  $\frac{2}{3}$  ձայների մեծամասնութեամբ, իսկ միւս հարցերը՝ հասարակ մեծամասնութեամբ: Ընդհանուր ժողովի ընդունած որոշումները պարտադիր են բոլոր անդամների համար՝ թէ ներկաների և թէ բացակաների:

§ 33 Հարցերը ընդհանուր ժողովի քննութեան առաջարկել կարող են միայն վարչութեան միջոցով, ուստի որևէ առաջարկ անել

Ծանօթ. 2. Երբ ընդհանուր ժողովը, այս §-ում յիշւած պայմանները պահպանելով, կը հաստատէ առաջարկւած փոփոխութիւններն ու լրացումները կանոնադրութեան վերաբերմամբ, զրանից յետոյ այդ բոլորը պէտք է ներկայացնել իշխանութեան հաստատութեանը՝ բացատրելով այն պատճառներն ու դիտողութիւնները, որոնք ստիպել են այդպիսի փոփոխութիւններ կամ լրացումներ անել:

ցանկացողը պէտք է այդ մասին գրաւոր դիմէ վարչութեանը ոչ ուշ քան ընդհանուր ժողով հրաւիրելուց 7 օր առաջ: Եթէ առաջարկը արւած է ընկերութեան անդամների  $\frac{1}{5}$ -րորդ մասի կողմից, այդ դէպքում վարչութիւնը պարտաւոր է այդ առաջարկը դնել հետևեալ ընդհանուր ժողովի քննութեանը իր եզրակացութեան հետ միասին:

§ 34 Գործերի կանոնաւոր ընթացքի համար ընդհանուր ժողովը ընտրում է իր միջից նախագահ և քարտուղար: Իսկ մինչև այդ նախագահի ընտրութիւնը, նրա դերը կատարում է վարչութեան նախագահը:

§ 35 Ընդհանուր ժողովի որոշումների մասին կազմուում է արձանագրութիւն, որը նիստի վերջում բանձրաձայն կարդալուց յետոյ պէտք է ստորագրեն՝ ժողովի նախագահը, քարտուղարը վարչութեան ներկայ եղող բոլոր անդամները և ընկերութեան անդամներից գոնէ երեքը:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ, ՆՐԱ ԻՐԱԽՈՒՆԲՆԵՐԸ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 36 Ընկերութեան գործերի անմիջական ղեկավարութիւնը պատկանում է վարչութեանը, որ գտնւում է Ղազարի գաւառի (Գանձակի նահանգ) Չարխէշ գիւղում և բաղկացած է ոչ պա-

կաս, քան 3 հոգուց՝ ընդհանուր ժողովի կողմից երեք տարի ժամանակով ընտրւած \*):

§ 37 Վարչութեան որևէ անդամին փոխարինելու համար (երկարատև բացակայութեան, հիւանդութեան մահւան կամ ժամանակից շուտ հրաժարելու դէպքում) ընդհանուր ժողովը ընտրում է նաև կանդիտատներ համապատասխան թւով և նոյն հիմունքներով, ինչպէս վարչութեան անդամները: Կանդիտատները վարչութեան անդամի պաշտօն կատարելու ժամանակ օգտուում են այն բոլոր իրաւունքներին ու արտօնութիւններին, որ յատկացրած են այդ պաշտօնին:

§ 38 Ընտրութիւններից մէկ տարի յետոյ ընդհանուր ժողովի որոշած քանակութեամբ վարչութեան անդամներից ու նրանց կանդիտատներից հեռանում են այնքան հոգի, որքան որ որոշել է ընդհանուր ժողովը:

\*) Ծանօթ. 1. Վարչութեան անդամները կարող են ընտրել առնւազն մէկ լրիւ պայ ունեցող անձինք:

Ծանօթ. 2. Վարչութեան անդամների թիւը որոշւում է ընդհանուր ժողովի կողմից՝ ընկերութեան գործողութիւնների համեմատ: Գործի իւրաքանչիւր ճիւղի համար կարելի է ընտրել վարչութեան մի անդամ:

Ծանօթ. 3. Այն անդամները, որոնք ընկերութեանը մատակարարում են ապրանքներ կամ ունեն նրա նման գործողութիւններ, չեն կարող վարչութեան անդամ ընտրուել:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴՄԻԱ

Այդ հեռանալը առաջին անգամ հետադարձում է վիճակով, իսկ յետոյ հերթով՝ ըստ աւագութեան: Ծերացած անդամների ու կանդիտատների փոխարէն ընտրւում են նորերը:

§ 39 Վարչութեան հեռացած անդամի տեղը բռնող կանդիտատը մնում է վարչութեան կազմի մէջ այնքան ժամանակ, որքան ժամանակով որ ընտրւած է հեռացած անդամը, բայց ոչ աւելի այն ժամանակից, որի համար ընտրւած է կանդիտատը\*):

§ 40 Վարչութեան անդամները իւրաքանչիւր տարի ընդհանուր ժողովից յետոյ իրենց միջից ընտրում են նախագահ, փոխ-նախագահ, գանձապահ և քարտուղար \*\*):


§ 41 Վարչութեան անդամները իրենց աշխատանքի համար կարող են ստանալ կամ որոշ ուժեղ կամ օգուտից որոշ տոկոս՝ ընդհանուր ժողովի սահմանած քանակով:

§ 42 Վարչութիւնը կարգադրում է ընկերութեան բոլոր գործերն ու կապիտալները. նրա

\*) Ծանօթ. Վարչութեան հեռացած անդամներն ու կանդիտատները կարող են վերընտրուել, եթէ ցանկութիւն յայտնեն:

\*\*\*) Ծանօթ. Գանձապահի և քարտուղարի պաշտօնը կարելի է յանձնել միեւնոյն մարդուն:

(36263-66)  
4266-2008



պարտականութիւնն է ա) ընդունել, դուրս տալ, պահել գումարները և տոկոսային թղթերը՝ ընդհանուր ժողովի որոշած կարգով:

բ) Կազմակերպել հաշւապահութիւնը, ինչպէս նաև կազմել (§§ 51—53) տարեկան հաշիւները, բալանսը, նախահաշիւն ու գործունէութեան նախագիծը:

գ) Որոշել ընկերութեան համար անհրաժեշտ պաշտօնեաների թիւը, նշանակելով նրանց դբադմուների առարկաներն ու վարձատրութեան չափը:

Այդ պաշտօնեաներին արձակելն էլ վարչութեան իրաւունքն է:

դ) Գնել, ծախել, պահել սպառելու և տնային գործածութեան զանազան առարկաներ, միևնոյն ժամանակ հետևելով, որ նրանք չաւ յատկութիւն ունենան:

ե) Որոշել պատրաստելիք ապրանքների յատկութիւնը, ինչպէս նաև նրանց ձեռք բերելու ձևը (կանխիկ դրամով կամ կրեդիտով):

զ) Կազմակերպել ընկերութեան ձեռնարկները և կառավարել նրանց:

է) Գտնել միջոցներ սպառման, և տնային գործածութեան առարկաները լաւացնելու և էփանացնելու համար:

ը) Վարձել պահեստատեղեր, ընակարաններ և այլ շինութիւններ, որոնք հարկաւոր կը

լինեն ընկերութեան գործողութիւնների համար:

թ) Ապահովագրել ընկերութեան ունեցւածքը:

ժ) Տալ և ընդունել մուրհակներ և այլ պայմանաժամային պարտաւորութիւններ՝ ընդհանուր ժողովի որոշած սահմաններում:

ժա) Ընկերութեան անունից պայման կապել ապրանքներ ձեռք բերելու վերաբերմամբ:

ժբ) Հաւատարմաթուղթ տալ այն մարդկանց, որոնք վարչութեան որոշմամբ նշանակւում են իբրև ընկերութեան պաշտօնեաներ: Նոյնը և ընդհանուր ժողովի կողմից նշանակւած պաշտօնեաների վերաբերմամբ:

ժգ) Օրինական ակտեր կազմել անշարժ սեփականութիւն ձեռք բերելու կամ ծախելու վերաբերմամբ:

ժդ) Ընդունել ընկերութեան նոր անդամներ և

ժե) Ընկերութեան անդամներին ընդհանուր ժողովի հրաւիրել և արհասարակ կառավարել կարգադրել ընկերութեան վերաբերեալ բոլոր գործերը ընդհանուր ժողովի որոշած սահմաններում:

Վարչութեան գործունէութեան մանրամասն ծրագիրը, նրա իրաւունքների ու պարտականութիւնների սահմանը որոշւում է յատուկ հրա-

հանգով, որ մշակել և փոփոխել կարող է միայն ընդհանուր ժողովը:

§ 43 Վարչութիւնը ծախսեր է կատարում համաձայն ընդհանուր ժողովի հաստատած նախահաշւի:

Ընդհ. ժողովը կարող է որոշել, թէ արտակարգ դէպքերում վարչութիւնը ինչ գումար կարող է ծախսել նախահաշւից դուրս: Իւրաքանչիւր այդպիսի ծախս պէտք է ներկայցնել մօտակայ ընդհանուր ժողովի հայեցողութեանը:

§ 44 Վարչութիւնը առանձնապէս հոգ պէտք է տանի, որպէսզի շրջանառութեան կապիտալը առանց գործադրութեան չըմնայ: Այդ նպատակով, հետեւելու է առևտրին. վարչութեան անդամները կազմում են նկատողութիւններ այն ապրանքների պահանջի մասին, որից չունի ընկերութիւնը և ազատ փողերը գործադրում են այդպիսի ապրանքներ գնելու համար: Իսկ եթէ ապրանքներ գնելը որևէ պատճառով վաղաժամ կամ ոչ օգտակար համարւի—այդ դէպքում ազատ փողերը պէտք է դարձնել սոկոսային թրդութիւն կամ դնել մի որևէ բանկ՝ ընդհանուր ժողովի հայեցողութեամբ:

§ 45 Ընկերութեան խանութներում ապրանքների վաճառքը կատարւում է առանց սակարկութեան, բոլորին միևնոյն գնով: Իրա վրայ պէտք է հսկէ վարչութիւնը: Այդ նպատակով

վարչութիւնը կազմում է գների ցուցակ (պրէյս-կուրանտ), ստորագրում է և կախում է խանութի աչքի ընկնող մի տեղում: Եթէ ապրանքների բազմազանութեան և տեսակների շատութեան պատճառով անյարմար կըլինի գների ցուցակը—այդ դէպքում գները պէտք է նշանակել հէնց ապրանքների վրայ:

§ 46 Ընկերութեան անունից գրագրութիւնները կատարում է վարչութիւնը՝ նախագահի կամ անդամներից մէկի ստորագրութեամբ:

§ 47 Մուրհակները, հաւատարմաթղթերը, պայմանագրերը, ինչպէս նաև բանկերից փող յետ ստանալու գրութիւնները պէտք է ստորագրւած լինեն վարչութեան անդամների գոնէ կէսի կողմից:

Պոստից փող, կապոցներ և փաստաթղթեր ստանալու համար բուլական է վարչութեան մի անդամի ստորագրութիւնը, ընկերութեան կնիքով կնքելով:

§ 48 Վարչութիւնը ժողովի է գումարւում կարիքի համեմատ, բայց յամենայն դէպս ոչ ուշ, քան ամիսը մի անգամ: Ժողովի օրերը նշանակւում են վարչութեան անդամների համաձայնութեամբ: Վարչութեան նիստերին բացի անդամներից կարող են խորհրդակցական ձայնով ներկայ լինել նաև ընկերութեան անդամներից՝ ընդհանուր ժողովի թոյլտուութեամբ: Վարչութեան

նիստերը կայանալ կարող են միայն այն դէպ-  
քում, երբ ներկայ են անդամների կէսից աւելի:

Վարչութեան նիստերի մասին կազմուում են  
արձանագրութիւններ, որ ստորագրուում են ներ-  
կայ ելող անդամների կողմից:

§ 49 Վարչութեան որոշումները տրւում են  
ձայների մեծամասնութեամբ, իսկ մեծամասնու-  
թիւն չըստացած դէպքում վիճելի հարցը գրւում  
է ընդհանուր ժողովի քննութեան են յանձնուում  
այն բոլոր հարցերը, որոնց վերաբերմամբ վար-  
չութիւնը կամ վերաստուգիչ յանձնաժողովը  
կուզենան ընկերութեան անդամների համաձայ-  
նութիւնն ստանալ կամ որոնք կանոնադրութեան  
և ընդհանուր ժողովի շաստատած հրահանգի հա-  
մաձայն վարչութեան իրաւասութիւնից դուրս  
են \*):

§ 50 Վարչութեան անդամները իրենց պար-  
տականութիւնները կատարում են այս կանոնա-  
դրութեան մէջ ամփոփւած ընդհանուր օրէնք-  
ների ու որոշումների համաձայն: Եթէ նրանք  
այնպիսի կարգադրութիւններ անեն, որոնք հակա-  
ռակ են օրէնքին, բարձր են իրանց իրաւասութեան

\*) Ծանօթ. Եթէ անդամներից մէկը, վարչութեան  
որոշման հետ համաձայն չը լինելով, կը պահանջէ այդ  
մասին յիշել արձանագրութեան մէջ—այդ դէպքում  
նա պատասխանատու չէ կայացած որոշման նկատ-  
մամբ:

սահմաններից կամ եթէ անգործ լինեն ու խախ-  
տեն այս կանոնադրութիւնը և ընդհանուր ժո-  
ղովի որոշումները, այդ դէպքում պատասխանա-  
տուութեան կենթարկւեն օրէնքի ընդհանուր հի-  
մունքներով \*):

ԸՆԿԵՐՈՒԹԵՄՆ ԸՍՇԻԵՏԻՈՒԹԻՒՆԸ, ՕԳՈՒՏԻ ԲԱ-  
ԺԱՆՈՒՄԸ ԵՒ ԴԻՎԻԴԵՆՏԻ ԲԱՇԽՈՒՄԸ

§ 51 Ընկերութեան գործառնութեան տարին  
հաշւում է յունւարի մէկը: Իւրաքանչիւր ան-  
ցեալ տարւայ մասին վարչութիւնը կազմում է  
մանրամասն հաշիւ, բալանս և ներկայացնում  
ընդհանուր ժողովի քննութեանն ու հաստատու-  
թեանը \*\*):

§ 52 Հաշիւը պէտք է պարունակէ իր մէջ  
հետևեալ յօդւածների մանրամասնութիւնները.

ա) Շրջանառութեան և պահեստի կապի-  
տալների վիճակը:

բ) Հաշի ժամանակաշրջանի ընդհանուր  
մուտքը և ելքը:

\*) Ծանօթ. Ընդհանուր ժողովի որոշմամբ վար-  
չութեան անդամներին կարելի է հրաժարեցնել և մին-  
չև նրանց ժամանակամիջոցը լրանալը:

\*\*) Ծանօթ. Տարեկան ընդհանուր ժողովից երկու  
շաբաթ առաջ ընկերութեան անդամները իրաւունք ու-  
նեն նայել վարչութեան բոլոր գրքերը, ծանօթանալ  
բոլոր հաշիւների հետ:

դ) Ընկերութեան ծառայողների ուժիկների և առհասարակ վարչական ծախսերի գումարը:

դ) Ընկերութեան կանխիկ և պահեստում եղած ապրանքների հաշիւը:

ե) Ընկերութեան պարտքերը զանազան անձերին և վերջիններիս պարտքերը ընկերութեանը:

զ) Օգուտի և վնասի հաշիւը և

է) Զուտ օգուտի հաշիւը և նրա օրինակաւոր բաժանումը:

§ 53 Հաշիւների ստուգութեան համար ընդհանուր ժողովը մի տարի առաջ ընտրում է Վերաստուգիչ Յանձնաժողով՝ երեք կամ աւելի անդամներից բաղկացած, որոնք ընկերութեան մէջ ոչ մի վարչական պաշտօն չեն կարող ունենալ: Այդ Յանձնաժողովը հաւաքուում է ոչ ուշ, քան տարեկան ընդհանուր ժողովից մի ամիս առաջ և ստուգում է բոլոր գրքերը, փաստաթղթերը, հաշիւները, գործավարութեան ձեւերը և, այդ բոլորի մասին իր եզրակացութիւնը արձանագրելով, ներկայացնում է ընդհանուր ժողովին, որը և տալիս է վերջնական որոշում:

Այդ յանձնաժողովը իրաւունք ունի հարկաւոր համարած դէպքում տեղն ու տեղը ստուգել ապրանքները, ընկերութեան ունեցւածքը, վերաքննել տարւայ ընթացքում կատարած գործո-

ղութիւնները նրանց օգտակարութեան ու նպատակայարմարութեան տեսակէտից:

Իրա համար վարչութիւնը պէտք է Վերաստուգիչ Յանձնաժողովին բոլոր դիւրութիւնները տայ: Հետեւալ տարւայ նախահաշիւն ու գործունէութեան նախագիծն էլ ներկայացնում է Վերաստուգիչ Յանձնաժողովին, որը քննելով և իր եզրակացութիւնը տալով՝ ներկայացնում է ընդհանուր ժողովին: Բացի այդ բոլորից Վերաստուգիչ Յանձնաժողովը իրաւունք ունի պահանջելու վարչութիւնից, որպէսզի վերջինս արտակարգ ընդհանուր ժողով հրաւիրէ\*) (§ 28):

§ 54 Տարեկան հաշիւն ու բալանսը ընդհանուր ժողովի հաստատութիւնից յետոյ, երեք օրինակ ներկայացնում է ներքին գործերի մինիստրութեան տնտեսական ղեգարտամենտին և Գանձակի նահանգապետին: Բացի դրանից ընդհանուր ժողովի հայեցողութեամբ հաշիւը կարող է տպւել և պարբերական մամուլում:

§ 55 Ընդհանուր ժողովի կողմից հաշիւը հաստատւելուց յետոյ տարեկան զուտ օգուտից 10% յատկացւում է պահեստի դրամազուխի հա-

\*) Ծանօթ. Ընկերութեան գործերի վերաստուգութիւնը կարող է կատարւել նաև Գանձակի նահանգապետի կարգադրութեամբ, եթէ վերջինս տեղեկութիւն ստանայ, թէ ընկերութեան գործերը անկարգ են գնում կամ կանոնադրութեան խախտումն կայ:

մար և նոյնքան՝ պայերի համար դիվիդենտ, որ-  
պէսզի պայի իւրաքանչիւր բուբլոն տարեկան  
10<sup>0</sup>/<sub>0</sub>-ից աւելի չընկնի: Օգուտի մնացած գու-  
մարից գուրս գալով վարչութեան անդամներին  
հասանելիք տոկոսը, եթէ այդպիսին որոշած է  
ընդհանուր ժողովի կողմից (§ 41), մնացորդը  
պէտք է բաժանել ընկերութեան անդամներին՝  
նրանց գնած ապրանքների արժէքի համեմատա-  
կան չափով\*):

§ 56 Դիվիդենտը տրւում է երեք ամսւայ  
ընթացքում ընդհանուր ժողովի կողմից տարե-  
կան հաշիւը հաստատելուց յետոյ:

§ 57 Դիվիդենտը, տիրոջ ցանկութեան

\*) Ծանօթ. 1 Ընդհանուր ժողովը կարող է օգու-  
տի մի մասը յատկացնել ընկերութեան անդամների  
համար օգտակար նպատակներին (§ 1 ծանօթութիւն):

2. Երբ որ պահեստի գումարը հասաւ պայերի  
գումարի չափին, դրանից յետոյ ընդհանուր ժողովի  
որոշմամբ կարելի է դադարեցնել օգուտից տոկոսներ  
յատկացնելը պահեստի գումարի համար: Այդ ձևով  
տոկոս յատկացնելը նորից պարտադիր է դառնում,  
երբ պահեստի գումարից մի մասը ծախսւում է:

3. Դիվիդենտը հաշոււ է ամբողջ պայերի և  
ամբողջ ամիսների համար:

4. Դիվիդենտի կոպէկների կոտորակները յատ-  
կացնում են պահեստի գումարի համար:

դէպքում, կարելի է թողնել ընկերութեան կաս-  
սայում՝ նոր պայեր կազմելու համար \*):

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ՎԷՃԵՐԻ  
ՔՆՆՈՒԹԻՒՆԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՈՐ-  
ԾԵՐԻ ՎԵՐՁՍՑՆԵԼԸ

§ 58 Ընկերութեան գործերի վերաբերմամբ  
բոլոր վէճերը՝ անդամների միջև, նոցա և վար-  
չութեան անդամների միջև, վարչութեան ան-  
դամների և ընդհանուր ժողովից ընտրեալ միւս  
ծառայողների ու մասնաւոր անձերի միջև վճոււում  
են կամ ընդհանուր ժողովում, եթէ վիճոյք երկու  
կողերն էլ կը համաձայնեն կամ կը քննեն ընդ-  
հանուր դատաստանական կարգով:

§ 59 Ընկերութիւնը պատասխանատու է  
միայն իր սեփական շարժական ու անշարժ կայ-  
քերով և կապիտալներով:

§ 60 Եթէ հաշիւները փակելուց յետոյ որևէ  
փաստ մնայ, սա պէտք է ծածկել պահեստի գու-  
մարից: Եթէ այդ գումարը չը բաւականացնէ,  
չըջանառութեան գումարի մէջ գտնւած անդա-  
մակցական պայերից: Եթէ այդ ձևով պայերի

\*) Ծանօթ. Երբ որ ընկերութեան անդամի պա-  
յերի թիւը հասաւ ընդհանուր ժողովի որոշած չափին  
(§ 14), այդ դէպքում ընկերութեան կասսայում դրա-  
նից աւել թողած դիվիդենտի համար տոկոսներ չըպէտք  
է վճարել:

արժէքը պակասի, այն անդամները, որոնք ոչ մի լրիւ պայ չունեն, պարտաւորուում են ընդհանուր ժողովի որոշած ժամանակամիջոցում լրացնել իրենց պայերը մինչև նորմալ չափը:

§ 61 Ընկերութեան գոյութեան ժամանակամիջոցը չէ նշանակուում: Եթէ գործերի ընթացքից անհրաժեշտ դառնայ նրա փակումը—այդ դէպքում նրա գործողութիւնները կը դադարեցնեն ընդհանուր ժողովի որոշմամբ՝ երկու միմեանց հետևող նիստերում՝ եթէ մինչև երկրորդ նիստը չեն վերջացել առաջին նիստում յիշատակած փակման պատճառները\*):

§ 62 Ընկերութեան գործունէութիւնը դադարեցնելու դէպքում ընդհանուր ժողովը իր միջից ընտրում է լիկվիդացիայի յանձնաժողով՝ երեք հոգուց ոչ պակաս և որոշում է թէ ինչ կարգով պէտք է գործերը վերջացնել: Այդ յանձնաժողովը հրաւիրում են ընկերութեան պարտատէրերին (առանձին հրաւիրագրով կամ յայտարարութեամբ), միջոցներ են ձեռք առնում նրանց բաւարարութիւն տալու համար, վաճառում են ընկերութեան ունեցւածքը, խաղաղ

\*) Ծանօթ: Եթէ ընկերութիւնը հիմնադիրների միջոցով իշխանութիւնից թոյլտուութիւն ստանալուց յետոյ մի տարւայ ընթացքում չը սկսէ իր գործողութիւնները—այդ դէպքում նա կը համարւի չը կայացած:

համաձայնութեան են գալիս երրորդ անձնաւորութիւնների հետ-ընդհանուր ժողովի գծած սահմաններում:

Այն գումարները, որ հարկաւոր են պարտատէրերին բաւարարութիւն տալու, ինչպէս նաև վիճելի պահանջները լրացնելու համար—լիկվիդացիայի յանձնաժողովը պահէ դնում պետական բախային՝ հիմնարկութիւններից մէկում: Մինչ այդ չէ կարելի բաւարարութիւն տալ ընկերութեան անդամներին մնացած միջոցների համաձայն: Իր գործողութիւնների մասին լիկվիդացիայի յանձնաժողովը զեկուցանում է ընդհանուր ժողովին նշանակած ժամանակներում և դրանից անկախ լիկվիդացիան վերջացնելուց յետոյ ներկայացնում է ընդհանուր հաշիւ:

§ 63 Երբ լիկվիդացիայի յանձնաժողովի ներկայացրած հաշիւը ընդհանուր ժողովի կողմից հաստատուց (§ 62), դրանից յետոյ ընկերութեան անդամներին վերադարձնում են նրանց պայերը հասանելիք դիվիդենտի և պրեմիայի հետ միասին կամ եղած ֆլասները դուրս գալով (§ 60): Ընկերութեան մնացած կայքը, եթէ այդպիսին մնայ, ընդհանուր ժողովի որոշմամբ և Գանձակի նահանգապետի հաստատութեամբ գործադրում է ընդհանուր օգտակար նպատակների համար: Եթէ Գանձակի նահանգապետը համաձայն չը լինի—այդ դէպքում հարցը յանձնը-

ւում է ներքին Գործերի Մինիստրի վերջնական վճռին:

§ 64 Լիկվիդացիան սկսելու մասին վարչութեան բացատրութեամբ և վերջացնելու մասին լիկվիդացիայի յանձնաժողովի բացատրութեամբ Գանձակի նահանգապետի միջոցով պէտք է հաղորդել ներքին Գործերի Մինիստրին:

Բացի դրանից պէտք է անհրաժեշտ յայտարարութիւններն անել ի տեղեկութիւն ընկերութեան անդամների և ընկերութեան հետ որևէ առնչութիւն ունեցող անձերի:

Ընկերութիւնը կարող է փակել ներքին Գործոց Մինիստրի կարգադրութեամբ:



ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԻՐՆԵՐ — Տէր-Միքայէլ Աւագեանց, ատաղձագործ Մուսէս Սարիբէգեան Արզումանեանց, կօշկակար Օհաննէս Արզումանեան Օհանէսեան: Անձամբ ստորագրել է Չարխէչի քահանայ: Տէր-Միքայէլ Աւագեանց և Չարխէչի գիւղացիներ Մովսէս Սարաբէգեան Արզումանեանցի և Օհաննէս Արզումանեան Օհաննէսեանցի ստորագրութիւնը հաստատում եմ պաշտօնական կնիքովս և ստորագրութեամբս սեպտ. 15-ին 1913 թւի Դիլիջանում: Տանուէր Դիլիջանի գիւղական հասարակութեան Գրիգոր Սարկիսով (կ. տ.)



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.



ՀՀ Ազգային գրադարան



NL0049896

A white rectangular label with a barcode and Armenian text. The text at the top reads "ՀՀ Ազգային գրադարան" (National Library of the Republic of Armenia). Below the text is a standard 1D barcode. At the bottom of the label, the number "NL0049896" is printed.

10141

59

*мф*

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧНОЕЗНАНИЕ  
Академии Наук  
СССР

334.5  
2-37

*Синько*

